# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

## ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

Հուլիսի 9-ից 14 օրերին, Մոսկվայում, խաղաղության Համաշխարհային խորհրդի նախաձեռնությամբ, գումարվեց Ընդհանուր զինաթափման և խաղաղության համաշխարհային վեհաժողով, Կրեմլի Համագումարների ընդարձակ և լուսավոր պալատում: Համաժողովին մասնակցում էին 121 երկրների շուրջ 2 400 պատգամավորներ, մեծ թվով դիտորդներ և հյուրեր, այդ թվում ականավոր քաղաքական, հասարակական գործիչներ, եկեղեցական մեծ դեմքեր, գիտնականներ և գրողներ, արվեստագետներ, տարբեր զբաղմունքի տեր մարդիկ՝ ժուռնալիստներ, փաստաբաններ, պառլամենտականներ և այլն:

Մոսկվայում գումարված խաղաղության համաշխարհային այս վեհաժողովի պատգամավորները ներկայացուցիչներն էին աշխարհի բարի կամքի տեր միլիոնավոր ու միլիոնավոր մարդկանց և իրենց ելույթներում արտահայտում էին երկրագնդի բոլոր խաղաղասեր ժողովուրդների ամենանվիրական խոհերն ու զգացմունքները, հույսերն ու իղձերը և միաժամանակ պահանջում էին վերջ տալ հրեշավոր սպառազինությունների մրցավազքին, իրագործել ընդհանուր և լրիվ զինաթափում և ապրել խաղաղության ու բարօրության մեջ, եղբայրորեն:

Մոսկվայի խաղաղության համաշխարհային այս վեհաժողովը մեր ժամանակի կարևոր իրադարձությունն է, ուր քննվում էր արդիականության ամենահրատապ հարցերից մեկը՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆԱԹԱՓՈՒՄ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ:

Մոսկվայի խաղաղության համաշխարհային այս կոնգրեսին Հայ Եկեղեցու պատգամավորությանը բարեհաճել էր անձամբ գլխավորել խաղաղության ջերմ պաշտպան Ազգիս Վեհափառ Հայրապետը, տանելով Իրեն հետ խաղաղության այդ վեհաժողովին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի և Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու ողջույնն ու օրհնությունը:

Մոսկվայի մարզի Զագորսկ քաղաքում, հոգևորականների ժողովում, Վեհափառ Հայրապետն Իր ելույթում ասաց.

«ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՎՈ, ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՀԱՎԱՏԻ ՀԱԶԱՐ ԵՎ ՎԵՑ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԿԵՆՏՐՈՆ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ, ՄԵՆՔ ՈՂՋՈՒՅՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ԵՆՔ ԲԵՐՈՒՄ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՅՍ ՄԵԾ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ, ՈՐՏԵՂ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՁԱՅՆԸ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ԽՂՃԻ ՁԱՅՆԸ ՀՆՉՈՒՄ Է ՈՒԺԳԻՆ, ԱՇԽԱՐՀԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԲՈԼՈՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՎ:

ՈՂՋՈ՜ՒՅՆ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅՈ՜ՒՆ ՁԵԶ ԲՈԼՈՐԻԴ, ՍԻՐԵԼԻ ԵՂԲԱՅՐՆԵ՛Ր ԵՎ ՔՈՒՅՐԵ՛Ր»:

Երբեք պատահականություն չէ, որ Քրիստոնեական եկեղեցին, այդ թվում և Հայաստանյայց Առաքելական եկեղեցին, որպես սիրո, խաղաղության և ժողովուրդների միջև հաշտության վրա հաստատված աստվածահիմն հաստատություն, բերի իր սրտագին և գործուն մասնակցությունը մեր օրերի ամենահրատապ, այժմեական և կարևոր հարցին, որ է ընդհանուր զինաթափումը և խաղաղության պաշտպանությունը ամբողջ աշխարհում։

«ՀԵՏԵՎԱԲԱՐ——ասում է Վեհափառ Հայրապետն Իր ճառի մեջ,— ԵՐԿՅՈՒՂԻ ԵՎ ԱՆՍՏՈՒԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԱՌԱՊՈՂ ԱՅՍՕՐՎԱ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ, ՊԱՐՏԻՆՔ ՄԱՆԱՎԱՆԴ ՄԵՆՔ, ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐՍ, ՑՈՒՅՑ ՏԱԼ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԸ։

ԱՏՈՄԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԵՋ ԱՅԼԵՎՍ ԿԱՐԵԼԻ ՉԷ ՔՐԻՍՏՈՆՅԱ ԼԻՆԵԼ, ՄԱՐԴ ԼԻՆԵԼ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԱՏԻՆ ՊԱՇՏՊԱՆ ՉՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԵՎ ՉԳՈՐԾԵԼ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ»։

Ոչ մի ժամանակ աշխարհը չի տեսել այնքան արյուն ու արցունք, այնքան մահ ու ավերածություն, որքան առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմների տարիներին։

Մարդկությունը երբեք չի ապրել այնքան տառապանք ու հուսահատություն, որքան մեր օրերի սերունդը քսաներորդ դարի առաջին այս հիսնամյակում։

Իսկ է՛լ ավելի ահավոր, կործանարար ու բնաջնջող կլինի երրորդ համաշխարհային պատերազմը, եթե հնարավոր չլինի այն կասեցնել բարի կամքի տեր միլիոնավոր մարդկանց վճռական, համարձակ և հետևողական պայքարով։

Պատերազմը ոճիր է Աստուծո դեմ, քաղաքակրթության դեմ, մարդկության վեհ ու նվիրական իդեալների դեմ։

Խաղաղությունը կյանք է, երջանկություն, աշխատանք ու կառուցում, երազ ու ձգտում։

Խաղաղությունը կհաղթանակի և պետք է հաղթանակի պատերազմին, ինչպես ճշմարտությունը՝ կեղծիքին, իրավունքը՝ անարդարության, սերը՝ ատելության, արևը՝ խավարին։

«ԱՇԽԱՐՀԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԴԱՏԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ—— ասում է Վեհափառ Հայրապետը Իր ելույթի մեջ.— ՄԵԾԱԳՈՒՅՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՊԻՏԻ ԼԻՆԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՆՃԱՐԻ։ ՄԱՐԴՈՒ ԻՄԱՑԱԿԱՆ ՀԱՆՃԱՐԻ ՀՐԱՇԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՄԵԾ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ, ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆՔ ՍՊԱՍԵԼՈՒ ՆԱԵՎ ՆՐԱ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՆՃԱՐԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ։ ԵՎ ՄԻԱՅՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԱՆՃԱՐԻ ՀԱՂԹԱՆԱԿՈՎ ԿԱՐԵԼԻ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԱՊԱՀՈՎԵԼ ԻՄԱՑԱԿԱՆ ՀԱՆՃԱՐԻ ՍՏԵՂԾԱԾ ԲԱՐԻՔՆԵՐԸ՝ ՀԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐ ՄԱՐԴԿԱՆՑ ԵՎ ԲՈԼՈՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ»։

Խաղաղությունը կհաղթանակի, խաղաղությունը կապրի և կապրեցնի աշխարհի ու մարդկանց մտքի ստեղծագործած հոգևոր, իմացական, մշակութային, նյութական հոյակապ արժեքները, ողջ քաղաքակրթությունը։

Խաղաղությունը մարդկության պայծառ ապագան է, պաշտպանությունը միաժամանակ մարդկության հազարամյա պատմության։

Մարդկությունը կարող է ապրել առանց պատերազմի, առանց արյունահեղության։ Անզեն աշխարհը մեծ բարիք է համայն մարդկության համար։ Պատերազմը անհրաժեշտություն չէ։ Կան աշխարհում հզոր ուժեր, պատերազմ նյութող ուժերից ավելի հզոր, որոնք կարող են սանձահարել, զսպել պատերազմի հրձիգներին և փակել նոր պատերազմների ճանապարհները և մարդկությանը փրկել ջերմամիջուկային պատերազմի ահավոր վտանգից։

Բայց ինչպե՞ս հասնել ցանկալի խաղաղության։ Ինչպե՞ս նվաճել խաղաղությունը։

Կար ժամանակ, որ մարդիկ երազում էին խաղաղությունը, աղոթում էին խաղաղության համար։ Բայց այժմ հերիք չէ աղոթել միայն խաղաղության համար, այլ պետք է նվաճել խաղաղությունը, ոչ թե գեղեցիկ խոսքերով, այլ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ, ՊԱՅՔԱՐՈՎ, ՎՃՌԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՀԱՍՏԱՏԱԿԱՄՈՒԹՅԱՄԲ։

Ահա թե ինչո՞ւ, այսօր ևս, վճռական պետք է հնչի Քրիստոնեական Եկեղեցու միասնական ձայնը հանուն խաղաղության, իրավուն-

րի, արդարության, հանուն ժողովուրդների ազգային, կրոնական վեհիրավության և ազատության, ընդդեմ պատերազմի:

«ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՆԹԻՎ ԱՆՀԱՄԱՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՄԵՐ ՍՐՏԻ ՄԵՋ, ՄԵՆՔ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆՔ ԲՈԼՈՐԻՑ, ՄԱՆԱՎԱՆԴ ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՑ՝ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԻՆԱԹԱՓՈՒՄ,— եզրակացնում է Վեհափառ Հայրապետը իր գեղեցիկ ելույթը:

Մոսկվայի խաղաղության Համաշխարհային վեհաժողովի կոչերը, պատգամները ու ընդունված բանաձևերը կհանդիսանան բարոյական մի նոր խթան ժողովուրդների ազնիվ, նվիրական պայքարի ճանապարհին հանուն եղբայրության, սիրո և միջազգային խաղաղության:

Վեհաժողովի որոշումները, միաձայն ընդունված բանաձևերը և ուղերձը ոգեշնչում են խաղաղության մարտիկների մեծ բանակին նորանոր ստեղծագործությունների՝ հանուն ընդհանուր նպատակի՝ խաղաղության պահպանման:

«ԶԻՆԱԹԱՓՈՒՄԸ,—ասվում է կոնգրեսի բոլոր ժողովուրդներին ուղղված ուղերձում, — ՈՉ ՄԻԱՅՆ ԿԵՆՍԱԿԱՆՈՐԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ Է, ԱՅԼԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ: ԵՐԵԿ ՆԱ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄՏԱԾՈՂՆԵՐԻ ԵՐԱԶԱՆՔՆ ԷՐ: ԱՅՍՕՐ ԶԻՆԱԹԱՓՈՒՄԸ ԴԱՐՁԵԼ Է ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐ, ՈՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ՊԱՅՔԱՐԻ ՄԵՋԱՆԻՑ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐԸ»:

Դժվար է և փշալից խաղաղության ճանապարհը, բայց ոչ աննվաճելի և անկարելի:

ՄԻԱՅՆ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՋԱՆՔԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՍՏԻՊԵԼ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻՆ ԼՈՒԾՈՒՄ ԳՏՆԵԼՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆԱԹԱՓՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԽԱՂԱՂ ԼՈՒԾՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ:

Թո՛ղ չճանաչեն պատերազմի մահաբեր ամպերը և մարդկության վերև միշտ պայծառ ու ջինջ մնա խաղաղության երկնակամարը:

Թո՛ղ ամենաբարին Աստուծո օրհնությունը լինի երկրագնդի խաղաղասեր բոլոր ժողովուրդների վրա:

Թո՛ղ Աստուծո բարիքներով հարուստ այս աշխարհում հաղթանակեն ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ, ՍԻՐՈ, ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅԱՆ, ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՀ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ: